ՎԱՆԸ ՄԻՋՆԱԴԱՐԻՑ ՄԻՆՉԵՎ XX ԴԱՐԻ ՍԿԻԶԲԸ

ՍԵՐԳԵՅ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Վանն իր պատմության ընթացքում քանիցս ավերվել և վերաշինվել է: IV դարի դեպքերը նկարագրելիս Փավստոս Բուզանդը պատմում է, որ պարսից արքա Շապուհ Երկրորդի զորքերը 368–369 թթ. Հայաստանի մյուս քաղաքները նվաճելուց հետո «Առան նաև Վան ամուր քաղաքը... կրակ տվին, այրեցին, հիմքերը քանդեցին, այնտեղից էլ դուրս բերին հինգ հազար տուն հայ...»[1]:

Արաբական տիրապետության շրջանում քաղաքն անկում է ապրում: Երբ 908 թ. Գագիկ Արծրունին Վասպուրական աշխարհին անկախ թագավորություն, իսկ իրեն թագավոր հռչակեց[2], Վանը դարձավ Վասպուրականի թագավորության (908–1021 թթ.) մայրաքաղաքը և կրկին պալատներով զարդարվեց:

Չդիմանալով արևելքից ու արևմուտքից արշավող թշնամիների հարձակումներին՝ բյուզանդական կայսր Վասիլ Երկրորդի պարտադրմամբ Վասպուրականի թագավոր Սենեքերիմ Արծրունին 1021 թ. ստորագրեց մի պայմանագիր, որով Արծրունյաց թագավորությունն իր 8–10 քաղաքով, 72 բերդով և 4000 գյուղով միացվեց Բյուզանդիային: Սենեքերիմ Արծրունին այդ ամենի փոխարեն ստացավ Սեբաստիա քաղաքն ու գավառը, ուր նրա հետ փոխադրվեց 14 հազար ընտանիք[3]: Թագավորի հետ գաղթեց նաև վանեցիների մի մասը:

XII–XIII դարերի արաբ աշխարհագիր Իբն ալ-Ասիրի վկայությամբ, Վանի ամրոցը «մեծագույն և ամենից անառիկ բերդերից էր»[4]:

Բայց ծովազարդ քաղաքին վիճակված չէր խաղաղ կյանք: Իրար են հաջորդում սելջուկ թուրքերը, մոնղոլներն ու թաթարները, պարսիկները: 1387 թվականի սեպտեմբերին, ինչպես Լենկթեմուրի մասին գրում է Թումա գրիչը, «շուն մի եկեալ խորասանցի»[5], որը պաշարում է Վանը: Քաղաքի բնակիչները 26 օր ու գիշեր անօրինակ քաջությամբ պաշտպանում էին բերդը, բայց Թեմուրի մեծաթիվ զորքը, ի վերջո, ճեղքում է պաշտպանների շղթան և ներխուժում քաղաք: Նրանք Վանի բնակիչներից շատերին իրար կապելով ցած են նետում բերդի բարձրաբերձ պա-

---

[1] *Փ ա վ ս տ ո ս Բ ո ւ զ ա ն դ. Պատմություն Հայոց, թարգմ., ներածություն և ծանոթագր. ակադ. Ստ. Մալխասյանի, Երևան, 1968, էջ 219:*

[2] *Թ ո վ մ ա Ա ր ծ ր ո ւ ն ի և Ա ն ա ն ո ւ ն. Պատմություն Արծրունյաց տան, ներածությունը, թարգմանությունը և ծանոթագրությունները Վ. Վարդանյանի, Երևան, 1978, էջ 289-290:*

[3] *Նույն տեղում էջ 310:*

[4] *Ի բ ն ա լ - Ա ս ի ր, թարգմ. բնագրից, առաջաբանը և ծանոթագրությունները Արամ Տեր-Ղևոնդյանի.– Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, 11, Արաբական աղբյուրներ Բ, Երևան, 1981, էջ 292:*

[5] *Հ. Հ ա կ ո բ յ ա ն. Վասպուրականի մանրանկարչությունը, հ. 2, Երևան, 1982, էջ 9, նաև՝ ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց Լ. Խաչիկյան, Երևան, 1950, էջ 589-590:*

րիսպներից: Գրիգոր Խլաթեցու չափածո հիշատակարանի վկայությամբ, վերջին նետվածները, ընկնելով դիզված դիակների վրա, ողջ էին մնում. «...Մինչ մըսադէ-զրն բարձրացեալ, Եւ որք անկեալ՝ այլ ոչ մեռեալ»[6]:

Կարա-կոյունլու, ապա և ակ-կոյունլու թուրքմենական ցեղերի տիրապետության շրջանում (1410–1502 թթ.) ևս Վանը խաղաղություն չտեսավ: 1424-ին կարա-կոյունլուների առաջնորդ Իսքանդարը հիսուն օր օղակում է Վանի բերդը, բայց չի նվաճում: Հաջորդ տարվա գարնանը նա վերադառնում է և պաշարմամբ գրավում քաղաքը[7]:

Բայց իրար հաջորդող ասպատակիչները չեն կարողանում կոտրել հայերի անկախության ձգտումը: Հանուն հայրենիքի ազատության պայքարը շարունակվել է բոլոր դարերում: Գաղթ ու կոտորածների, հրի բաժին են դարձել բազմաթիվ ձեռագրեր ու հիշատակարաններ, և շատ քիչ, երբեմն էլ ոչ մի տեղեկություն չի պահպանվել մեր ժողովրդի մղած բազում ճակատամարտերի ու հերոսամարտերի մասին: Հայոց արքայատոհմերի, նախարարական և իշխանական տների տարբեր ճյուղեր ու ժառանգներ միշտ էլ փորձել են վերականգնել հայոց պետականությունը: Մի այդպիսի փորձ են արել նաև Արծրունիների շառավիղներից Սեֆեդինյանները, որոնք կարողացել էին մեծ ազդեցություն ձեռք բերել Վասպուրականում[8]: Աղթամարի կաթողիկոսներ Զաքարիա Երրորդ (1434–1464 թթ.) և Ստեփանոս Չորրորդ (1465–1489 թթ.) Սեֆեդինյանների տարիների պայքարը, ի վերջո, պսակվում է հաջողությամբ, և 1466-ին Ստեփանոս Չորրորդն իր եղբորը՝ Սմբատին, Վասպուրականի թագավոր է օծում: Նրան թագավոր է ճանաչում և աջակցում նաև կարա-կոյունլուների տիրակալ Ջհանշահը: Հայոց այս վերջին թագավորի արքայանիստը Աղթամար քաղաքն էր[9]: Թեև Սմբատի թագավորությունը կարճ է տևում, բայց XV–XVI դարերում Վասպուրականում ընդօրինակված մի շարք ձեռագրերի հիշատակարաններում Աղթամարն անվանվում է «թագաւորական աթոռ»: Իսկ Աղթամարի կաթողիկոսներն իրենց կոչում էին «թագաւորազն՝ ի թոռանց և ի շառաւեղէ արքային Գագկայ»[10]: Ի դեպ, հնում Աղթամար կղզին շատ ավելի ընդարձակ էր և դարերի ընթացքում Վանա լճի մակարդակի բարձրացման հետևանքով նվազել է: Գագիկ Արծրունու հիմնած քաղաքը դեռևս XVI դարում գոյատևում էր, և վենետիկցի մի վաճառական 1510-ական թվականներին կղզի այցելելով՝ գրել է. «Կղզու վրա կա մի փոքրիկ քաղաք՝ երկու մղոն շրջագծով. քաղաքն ունի այնքան տարածություն, որքան կղզին: Այս քաղաքը կոչվում է Արմենիկ, շատ բազմամարդ է, և միայն հայ քրիստոնյաներն են բնակվում այնտեղ, առանց որևէ մահմեդականի. ունի շատ եկեղեցիներ»[11]: Իսկ Վանը նա այսպես է նկարագրել. «Վանի բերդը կառուցված է քարաժայռի վրա, որից անուշ ջուր է բխում... Այն

---

[6] *ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, հ. Ա, կազմեց Լ. Ս. Խաչիկյան, Երևան, 1955, էջ 286-287:*

[7] *Հայ ժողովրդի պատմություն, հ. 4, Երևան, 1972, էջ 36:*

[8] *Թ ո վ մ ա Ա ր ծ ր ո ւ ն ի և Ա ն ա ն ո ւ ն. Պատմություն Արծրունյաց տան, էջ 323-325:*

[9] *Հայ ժողովրդի պատմություն, հ. 4, էջ 44:*

[10] *ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, հ. Բ, կազմեց Լ. Խաչիկյան, Երևան, 1958, էջ 172:*

[11] *Հ. Հ ա կ ո բ յ ա ն. Ուղեգրություններ, հ. Ա, Երևան, 1932, էջ 300:*

մի մղոնից ավելի շրջագիծ ունի, բայց ինչպես այն ժայռը, որի վրա կառուցված է՝ նեղ է և երկար: Ամրոցից ներքև կա մի մեծ քաղաք, որի բնակչության մեծ մասը հայեր են...»[12]:

XVI–XVII դարերում Թուրքիայի և Իրանի միջև անընդհատ պատերազմների ընթացքում Վանը ձեռքից ձեռք անցավ: 1533-ին այն գրավեցին թուրքերը, սակայն շուտով քաղաքը պաշարեցին պարսիկները, և սովից ու սրից 16 հազար մարդ զոհվեց[13]: Վանի հետգրավումն այնքան նշանակալից իրադարձություն էր, որ երբ սուլթան Սուլեյման Կանունին 1548-ին այն նվաճեց, շտապեց այդ մասին նամակով հայտնել Ֆրանսիայի թագավորին: Իր նամակում նա Վանի բերդն անվանում է «ամրակուռ» և «երկնամբարձ»: Ըստ թուրքական բանակում գտնվող ֆրանսիական դեսպան և ռազմական խորհրդական դ'Արամոնի, սուլթանը Վանի բերդը համարում էր «Պարսկաստանի ամենանշանավոր և ամենաանառիկ ամրոցը»[14]: Թեև սուլթանը մեծամտաբար գրում է, որ Վանը գրավել է «կարճ ժամանակում»[15], բայց թուրք պատմիչ Սոլաք Զադեի հաղորդած մանրամասներից պարզվում է, որ Վանը կատաղի դիմադրություն է ցույց տվել: «Բազմահազարանոց բանակը կանգ առավ Վանի դաշտում,– գրում է նա,– զինվորների հետ նախապես ուղարկված թնդանոթների համար տեղեր պատրաստվեցին, խրամատներ փորվեցին և բերդի նվաճման համար ձեռք առան բոլոր անհրաժեշտ միջոցները: Մոտ տասը օր թնդանոթներով, հրացաններով ու նետերով պատերազմելուց հետո բերդում պաշարվածները... բերդը հանձնեցին»[16]: Թուրք պատմիչը չի թաքցնում իր հիացմունքը հայ ճարտարապետների ու շինարարների հանդեպ. «Այդ ամրակուռ բերդը կառուցող փորձված երկրաչափների մարդիկ հազվագյուտ են, և սրա վաստակավոր ճարտարապետները միայն իրենց երևակայությամբ են նկարել նրա պատկերը: Այս բերդը Պարսից երկրի բանալին է և այդ կողմերի ամրակուռ պարիսպը: Մոլորյալ շահը պարծենալով ասում էր. «Քանի որ (Վանի) դեղին ժայռն իմ հրովարտակի տակ է, օսմանյան սուլթաններից ի՞նչ վախ ունեմ»[17]:

Վանը կառուցող հայ շինարարների հանճարը հարուցել է նաև XVII դարի թուրք պատմիչ Չելեբիի զարմանքը: Նրա նկարագրությունից կարելի է պատկերացնել, թե ինչպիսին է եղել Վանը մեծ երկրաշարժից առաջ. «Քաղաքն ունի ներքին և արտաքին պարիսպներ: Ներքին պարիսպը քաղաքի արևմտյան կողմում, բարձր և կտրված ժայռի վրա է, որի մեկ կողմում քաղաքն է... մյուս կողմում, պարսպից դուրս՝ ամրակուռ բերդը: Արևմտյան կողմը, որտեղ քաղաքն է, կա պարսպի նման կտրված ժայռ: Արտաքին կողմը, դեպի դաշտն իջնող մի բլուր է,

---

[12] *Նույն տեղում, էջ 301:*

[13] *Տե՛ս, օրինակ, Բ. Ս ա ր գ ի ս յ ա ն. Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց, հ. II, Վենետիկ, 1924, էջ 1173, Հայ ժողովրդի պատմություն, հ. 4, էջ 83:*

[14] *Մ. Զ ո ւ լ ա լ յ ա ն. Հայ ժողովրդի պատմության հարցերը ըստ եվրոպացի հեղինակների՝ 13-18 դդ., հ. Ա, Քաղաքական պատմություն, Երևան, 1990, էջ 118:*

[15] *Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, հ. Բ, թարգմ. թուրքական բնագրերից, ներածական ակնարկներով, ծանոթ. և հավելվածով կազմեց Ա. Սաֆրաստյան, Երևան, 1964, էջ 204:*

[16] *Նույն տեղում, էջ 142:*

[17] *Նույն տեղում:*

որի վրա առանձին տեղերում կառուցվել են երկու հարկանի ամուր աշտարակներ և պատնեշներ... Թեմուր Գերբանը, գրավելով Վանը, իր մեծ էմիրներից մեկին պատվիրել էր բերդը քանդել: Զանազան միջոցներ և ամեն տեսակ ջանքեր գործ դնելուց հետո, հնարավոր չեղավ բերդը լիովին ավերել: Չկարողանալով քանդել այդ լեռնանման բերդի քարաշեն հիմքերը, բավականացան հետագայում շինված մի քանի աշտարակներն ու պատնեշները փլուզելով: Սակայն այս ավերումները չսասանեցին բերդի ամրությունը: Դրանից կարելի է պատկերացնել, թե ինչ աստիճանի ամրակուռ էին Վանի բերդը և նրա պարիսպները»[18]:

Ինչ չհաջողվեց անել բարբարոս էմիրի զորքերին, 1648-ին ընդամենը մի քանի վայրկյանում կատարեց ահավոր երկրաշարժը: Թե ինչ ուժգնություն է ունեցել տարերքը, վկայում է այն, որ փլվել են նույնիսկ Վանի անխորտակ համարվող պարիսպները: Առաքել Դավրիժեցին մանրամասն նկարագրել է ավերումները. «Փլվեց Վան քաղաքի ներքին բերդի պարիսպը Թավրիզի դարպասից մինչև Իղարի բուրգը: Նաև այստեղ-այնտեղ շատ տեղեր պարսպից փլուզվեցին ու փլվեցին, իսկ նրանք, որ չփլվեցին, խախտվեցին, որոնք բոլորը հետո քանդեցին և նորից ամբողջը շինեցին»[19]: Բերդն ու պարիսպները շինարար վանեցիները վերականգնեցին, ահավորը մարդկային մեծ կորուստներն էին, որ պատճառեց երկրաշարժը: Դավրիժեցու նկարագրությունը բացահայտում է մեր ժողովրդի ողբերգական էջերից մեկը. «Բազմաթիվ տներ, ապարանքներ, շինվածքներ փլվեցին և իրենց տակ թողին բազմաթիվ մարդկանց ու անասունների: Մեռածներն այնքան շատ էին, որ բարձած սայլով տանում էին քաղաքից դուրս: Թաղելիս չէին կարողանում գերեզման փորել, այլ գետինը ճեղքելով մեծ վիհ էին անում և մեռելներից ութին, տասին փաթաթում էին կտավով, դնում վիհը և հողով ծածկում»[20]: Տարերքի ահռելի ուժգնությունն է վկայում այն, որ ավերվել են նույնիսկ քաղաքի ու շրջակայքի քարակոփ եկեղեցիները, իսկ «Նորագեղի եկեղեցին մի արտաչափ հեռու թռավ իր տեղից, հեռացավ, ապա փլվեց»[21]:

Երբ փլատակների վրա նստեց փոշին, և ողբացյալները թաղեցին հարազատներին, անկոտրում վանեցիները սկսեցին խորհել վանքերն ու եկեղեցիները վերականգնելու մասին: Բայց դրա համար անհրաժեշտ էր ոչ միայն մեծ գումար, այլև, ըստ ժամանակի օրենքի, սուլթանի համաձայնությունը: Վանի մեծահարուստ խոջաները մարդ են ուղարկում Կոստանդնուպոլիս, և խոջա Ռահիջանին հաջողվում է ստանալ սուլթանի թույլտվությունը[22]:

Այն ամենը, ինչը հուզել է վանեցիներին, գրի է առնվել ձեռագրերի հիշատակարաններում ու ժամանակագրություններում, ու թեև դրանց մեծագույն մասն այրվել ու ոչնչացվել է, բայց պահպանվածների շնորհիվ կարելի է որոշ պատկերացում կազմել Վանի գլխով անցած-դարձածի մասին: XIII դարի վերջերից մինչև

---

[18] *Նույն տեղում, էջ 31:*

[19] *Ա ռ ա ք ե լ Դ ա վ ր ի ժ ե ց ի. Պատմություն, թարգմանությունը, առաջաբանը և ծանոթ. Վ. Առաքելյանի, Երևան, 1988, էջ 381:*

[20] *Նույն տեղում, էջ 382:*

[21] *Նույն տեղում, էջ 383:*

[22] *Նույն տեղում, էջ 381:*

XVIII դարի կեսերը Վան-Վասպուրականում ընդօրինակվել և ծաղկվել է շուրջ 1500 ձեռագիր, գոյատևել է Վասպուրականի մանրանկարչության դպրոցը[23]: Դրան մեծապես նպաստել է այն, որ դեռևս 1113 թ. Աղթամարում հիմնված կաթողիկոսությունը մինչև իր գոյության ավարտը՝ 1895 թվականը, հովանավորել և աջակցել է Վան-Վասպուրականի գեղարվեստի զարգացմանը: Վասպուրականի բարեխիղճ ժամանակագիրներից տեղեկանում ենք, որ 1707-ի մայիսի 27-ին Վանի վրա «բամպակ տեղաց», հուլիսի 5- ին քաղաքում սաստիկ երկրաշարժ եղավ[24]: Մի քանի տարի անց՝ 1715-ին, երկրաշարժը կրկնվում է, և չորս հոգի է զոհվում: Վանի Բարդուղիմեոս Առաքյալի եկեղեցու գմբեթն ընկնումէ[25]: Երկրաշարժ է լինում նաև 1750 թ. մարտի 7-ին [26]: Ժամանակագիրները հիշատակում են նաև Վանի պարոնների, իշխանների, իշխանաց իշխանների մասին: Երբ բաղեշցի մի քուրդ մոլլա 1705 թ. Վան գալով, փորձում է հայ երեխաներին կրոնափոխել, Վանի հայոց «իշխանաց իշխան պարոն խոջա Ախիջան Ղարասաֆարը» նրան քաղաքից վտարել է տալիս[27]:

Այո՛, Վան-Վասպուրականում պահպանվել էին հայկական իշխանական տները, որոնց մի մասը նույնիսկ հեծելազոր ուներ: Վանը պաշտպանում էին Վանկուլերի զորամասերը, որոնք մեծ առանձնաշնորհումներ էին ստացել: Ինչպես ուսումնասիրողներից մեկն է գրում, «Օսմանյան տիրապետությունը սկիզբները շատ անհաստատ է եղել, ուստի օսմանցիք տեղական ուժեր կը կազմակերպեին՝ Վանը... պարսից հարձակումներուն դեմ պաշտպանելու համար: Այդ ուժերուն կը հրամայեին Վանգուլի ըսված հայ և մասամբ քուրտ երևելիներ և իբրև ավատառու գերիշխան պետության: Կը պատմվի թե Վանգուլիներեն ոմանք երբեմն իրենց սեփական ուժերու վրա հենած՝ կըմբոստանային Վանի կուսակալին դեմ՝ զայն պաշտոնանկ ընելու և նույնիսկ կախել տալու աստիճան»[28]: Մեզ են հասել Վանի հայկական իշխանատներից մի քանիսի անունները՝ Պոչովյաններ, Ղարասեֆերյաններ, Թորամանյաններ, Պարոնենց (Պոյուն). վերջին գերդաստանից Կարապետը նույնիսկ մահապատիժ կայացնելու իրավունք էր ձեռք բերել[29]: XVII դարի վերջերին Վանի բերդն իր թնդանոթներով Տեր-Բարսեղենց գերդաստանին էր պատկանում, իսկ XVIII դարում անցավ Դանկովյաններին[30]: Արճեշում Վանի իշխաններին էր պատկանում յոթ հայկական գյուղ[31]: Իսկ իշխանաց իշխան Ղարասեֆերյաններից Հակոբը, ինչպես «Արձագանքն» է գրում, «Կարողացել է բացարձակ իշխան լինել Վանա համայն երկրին»[32]:

---

[23] *Հ. Հ ա կ ո բ յ ա ն. Վասպուրականի մանրանկարչությունը, հ. 2, էջ 5:*
[24] *Գ. Ս ր վ ա ն ձ տ յ ա ն ց. Երկեր, հ. 1, Երևան, 1978, էջ 304:*
[25] *Նույն տեղում, էջ 307:*
[26] *Նույն տեղում:*
[27] *Նույն տեղում, էջ 303:*
[28] *Հ. Ե ր ա մ յ ա ն. Հուշարձան Վան-Վասպուրականի, հ. Ա, Ալեքսանդրիա, 1929, էջ 18:*
[29] *Հ. Շ ա հ պ ա զ յ ա ն. Քուրդո-հայ պատմություն, Կ. Պոլիս, 1911, էջ 72:*
[30] *Հ. Պ ո ղ ո ս յ ա ն. Վասպուրականի պատմությունից (1850–1900), Երևան, 1988, էջ 29-30:*
[31] *Հ. Շ ա հ պ ա զ յ ա ն. նշվ. աշխ., էջ 71:*
[32] *«Արձագանք» (Թիֆլիս), 1882, թիվ 41:*

Այս ամենն ապացուցում է, որ հակառակ դարեր շարունակ կրկնվող ասպատակություններին, թուրք-պարսկական ավերիչ պատերազմներին, Օսմանյան Թուրքիայի վարած քաղաքականությանը, հայերը պահպանել էին իրենց իշխանական տներից շատերը:

Վան-Վասպուրականի հայերի ազատասիրական ոգին ընկճելու, նրանց զինական ուժերը ջլատելու, իշխանությունները քայքայելու նպատակով օսմանյան կառավարությունը թուրքերին և քրդերին ուղղում էր հայերի դեմ, ծանր հարկեր դնում, դիմում ստոր ու բարբարոս միջոցների: Հետևանքը լինում է այն, որ շատերն են գնում օտար երկրներ, այդ թվում և Արծրունիների ժառանգները: 1813-ին Վանից Թիֆլիս է տեղափոխվում հայ նշանավոր հրապարակախոս և հասարակական գործիչ, «Մշակի» խմբագիր Գրիգոր Արծրունու պապը՝ Գևորգ Արծրունին: Նա Վանում ուներ անբավ հարստություն, որն ավելի էր մեծացել Արծրունյաց մեկ այլ շառավղի՝ Պոչովյանների դստեր հետ ամուսնանալու շնորհիվ[33]:

1860-ական թվականներին ավելի ուժեղացավ հայերի հանդեպ ճնշումը, որին ի պատասխան բռնկվեց 1862 թ. Վանի զինված ելույթը[34]: Թուրքերը երկրի քրիստոնյաներին արգելում էին հուղարկավորության ժամանակ հանգուցյալի առջևից խաչ և խաչվառ տանել: Սակայն Վանի հայերը չէին ենթարկվում: Թուրքերը դիմում են Վանի փաշային, պահանջելով արգելել հուղարկավորության ազգային ծեսը: Շուտով մահանում է հենց ինքը՝ փաշան, նաև հայ հարուստներից մեկը: Հուղարկավորության ժամանակ թուրքերը հարձակվում են հայերի վրա, սկսվում է ծեծկռտուք: Վանի և շրջակայքի հայերը զինվելով պաշտպանում են հուղարկավորության մասնակիցներին: Ինչպես ժամանակի մի շարք թերթեր են գրում, «Բուն բերդի մեջ սկսվեց սոսկալի կռիվ և կոտորած: Բերդը մնաց հայերի ձեռքը, որովհետև թվով նրանք շատ էին տաճիկներից»[35]:

Վանի զինված ելույթից տասը տարի անց՝ 1872 թ., տեղի հայրենասերները կազմակերպեցին «Միություն ի փրկություն» ընկերությունը, որին անդամագրվեց նաև քաղաքի մեծահարուստների ու երևելիների մի մասը: Ընկերությունը դիմեց հայոց կաթողիկոսին, Կովկասի փոխարքային ու Երևանի նահանգապետին, հուսալով, որ նրանց միջամտությամբ Վանի հայության վիճակը կբարելավվի[36]:

1877–78 թթ. ռուս-թուրքական պատերազմի նախօրեին կառավարությունը Վանի հայերից պահանջեց մեծ գումարներ ընծայել թուրքական բանակին, անամոթաբար հայտարարելով, թե «իսլամ զորքերը ձեր հանգստության, ինչքի և կյանքի ապահովության համար բանակ պիտի երթան...»[37]: Մոտալուտ պատերազմի պատրվակով Վանի հայերից շորթվեցին ահռելի գումարներ, բայց կառավարութ-

---

[33] *Լ. Ե ռ. Երկեր, հ. 6, Երևան, 1987, էջ 208-213:*

[34] *Վանի զինված ելույթի մասին ավելի մանրամասն տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. V, Երևան, 1974, էջ 374-376:*

[35] *«Համբավաբեր Ռուսիո» (Մոսկվա), 1862, թիվ 2, «Փարիզ» (Փարիզ), 1862, թիվ 26, տե՛ս նաև Հայ ժողովրդի պատմություն, հ. V, էջ 376:*

[36] *Ե. Տ ե ր - Մ կ ր տ ի չ յ ա ն. Գանձեր Վասպուրականի, հ. 1, Բոստոն, 1966, էջ 347-352, Հ. Պ ո ղ ո ս յ ա ն. նշվ. աշխ., էջ 179-181:*

[37] *Հ. Ճ ա ն կ յ ո ւ լ յ ա ն. Հիշատակներ հայկական ճգնաժամեն, մաս Ա, Կ. Պոլիս, 1913, էջ 14:*

յան նպատակը միայն այդ չէր: Յանկանալով մահացու հարված հասցնել հայ վաճառականությանը, նրան դուրս մղել, և ասպարեզը թողնել միայն թուրքերին, նա ձեռնարկեց Վանի նշանավոր շուկայի հրդեհումն ու կողոպուտը, որին մասնակցում էին զինվորականները, ոստիկաններն ու մահմեդական խաժամուժը: Այդ չարաղետ դեպքի մասին հայ ազատագրական շարժման նշանավոր գործիչ վանեցի Արմենակ Եկարյանը գրում է. «Հետզհետե հաստատվեցավ, թե ատիկա պատահական աղետ մը չէր, այլ հատկապես պատրաստված կառավարության կողմե, փճացնելու համար հայ տարրին բարգավաճ կյանքը, և կառավարությունը աջողեցավ իր ձեռնարկին մեջ, որովհետև փճացած էր ոչ միայն ամբողջ շուկան՝ իր լեցուն խանութներովն ու վաճառատուներովը, այլև կրակեն կարելի չէր եղած ազատել հայ առևտրական դասուն հնչուն հարստությունը, որ... վաճառատան արկղներուն մեջ կը պահվեր»[38]: Հրդեհի բոցերը լափեցին շուրջ երկու հազար արհեստանոց, խանութ ու կրպակ[39]: Վանի շուկայի հրդեհից հետո բազմաթիվ սնանկացած հայեր գնացին Կ. Պոլիս: Մ. Փորթուգալյանի հաշվարկներով՝ 1877 թ. Կ. Պոլսում կար 20 000 պանդուխտ վանեցի[40]:

Թե՛ պատերազմից առաջ, թե՛ հետո վանեցիները նույնիսկ ծանրագույն պայմաններում մեծ ուշադրություն են դարձնում կրթությանն ու մշակույթին: 1860-ական թվականներին տրվում են թատերական առաջին ներկայացումները: 1863-ին կազմակերպվում է «Գինեհատ ընկերությունը», որը պայքարում էր հարբեցողության դեմ, 1865-ին հիմնվում է «Ուսումնաշահ ընկերությունը», որը նպատակադրվել էր կազմակերպել գրքերի վաճառք, հավաքել հազվագյուտ գրքեր, ստեղծել ազգային թանգարան: Վարագա վանքում ևս գրքեր են հրատարակվում[41]:

1870–80-ական թվականներին աշխուժանում են Վանի կրթօջախները: Մեծ աշխատանք են ծավալում Սանդխտյան իգական դպրոցը, Հայկազյան վարժարանը, Մ. Փորթուգալյանի հիմնած նշանավոր վարժապետանոցը, որի փակումից հետո՝ Կենտրոնական վարժարանը, Խրիմյան Հայրիկի նախաձեռնությամբ Վարագում բացված Երկրագիտական ուսումնարանը, որի խնդիրն էր երիտասարդներին ծանոթացնել երկրագործության նոր մեթոդներին ու նոր մեքենաներին, և այդ նպատակով Մանչեստրի հայերը դպրոցին նվիրեցին հնձող մեքենա[42]:

1870-ական թվականներին Վանում զարգանում է գրականությունը, որի մասին Լեոն գրում է. «Մի տաղանդավոր ժողովուրդ էր (Վանա լճի) այս ափի բնակչությունը ... : Տաղանդավոր էր նա թե՛ իր արհեստներով և թե՛ գրական հյուսողության թափով և այդ պատճառով էր, որ այնքան շատ տվեց բանավոր վեպեր, երգեր, զրույցներ»[43]:

Բայց Վանին վիճակված չէր խաղաղ, ստեղծագործ կյանք, և 1896-ի հունիսի 3-ին սկսվեց Վանի բնակչության կոտորածը: Անզեն մարդկանց, կանանց ու երեխա-

---

[38] *Հուշեր Արմենակ Եկարյանի, Կահիրե, 1947, էջ 2:*

[39] *«Մշակ» (Թիֆլիս), 1876, թիվ 49:*

[40] *«Մշակ», 1877, թիվ 61:*

[41] *Հ. Պ ո ղ ո ս յ ա ն. նշվ.աշխ., էջ 126:*

[42] *Նույն տեղում, էջ 201:*

[43] *Լ. ե ռ. Վանի գրականությունից.– «Գեղարվեստ» (Թիֆլիս), 1917, թիվ 6, էջ 205-215, տե՛ս նաև՝ Լ. ե ռ. Երկերի ժողովածու, հ. 9, Երևան, 1989, էջ 369-382:*

ների մի մասը պատսպարվեց օտարերկրյա հյուպատոսարաններում: ԱՄՆ-ի հյուպատոս, Վանի հնություններն ուսումնասիրող Ռեյնոլդսը, որը շուրջ քառորդ դար միսիոներական նպատակով Վանում էր, սկզբում նրանց թույլատրեց հանգրվանել հյուպատոսարանում, իսկ հետո մեծ մասին հանձնեց թուրքերին, որոնք տեղնուտեղը սպանում էին խեղճերին: Իսկ իրենց տունն ու պատիվը պաշտպանող հայերին Ռեյնոլդսը հորդորում էր զենքը վայր դնել[44]: Ահա այսպիսին էր հզոր երկրի քրիստոնյա քարոզիչ հյուպատոսի բարոյականությունը:

Չնայած թշնամու բազմությանը, վանեցիները դիմեցին ինքնապաշտպանության: Տարբեր կուսակցությունների ներկայացուցիչներից ստեղծեցին ինքնապաշտպանությունը գլխավորող մարմին: Թեև վանեցիների զինական ուժերը քիչ էին (արմենականներն ունեին 370, դաշնակցականները՝ 42, հնչակյանները՝ 30 հրացան), այնուամենայնիվ, որոշեցին կռվել: Շատերն էլ զինվեցին ինչով կարող էին, և ինքնապաշտպանների թիվը հասավ 700–900 հոգու[45]:

Սկսվում է անհավասար մարտ, որին անօրինակ քաջությամբ են մասնակցում Վանի բոլոր թաղերը: Կռիվը հատկապես արյունահեղ էր հունիսի 8-ին, երբ թուրքական կանոնավոր բանակն ու քրդական հեծելազորն ընդհ անուր հարձակման անցան, բայց հայերը ոչ միայն չընկրկեցին, այլ հակահարձակման անցնելով՝ թշնամուն ետ շպրտեցին և նույնիսկ գրավեցին բանակի թնդանոթները:

Օսմանյան կառավարությունը տեսնելով, որ Վանի առյուծասիրտ պաշտպաններին չի կարողանում ընկճել, օտար հյուպատոսներին ուղարկում է նրանց մոտ: Բանակցելու պատրվակով քանիցս ինքնապաշտպանների մոտ գալով, նրանք ուսումնասիրում են դիրքերը և հայտնում թուրքերին, իսկ անգլիական հյուպատոս Մ. Ուլյամն անձամբ է թուրքերի թնդանոթներն ուղղում հայկական պաշտպանական գծի խոցելի տեղերի վրա[46]:

Վանի հերոսամարտը տևեց ինն օր: Ի վերջո, կռիվը դադարեցնելու պայմաններն ընդունվեցին, ըստ որի քաղաքի պաշտպաններից շուրջ հազար հոգի պետք է իրենց զենքով անարգել հեռանային Պարսկաստան, իսկ օսմանյան կառավարությունն էլ չպիտի ճնշեր Վանի հայերին: Պաշտպանները խմբերի բաժանվեցին և տարբեր ճանապարհներով փորձեցին հեռանալ Վասպուրականից: Բայց ամենուր նրանց դարանակալել էին թուրքական զորքերն ու քրդական զինախմբերը: Ի վերջո, հայերը հարյուրավոր կորուստներ տալով, կարողացան անցնել Պարսկաստան[47]: Դեպքերի ժամանակակիցն այսպես է գրում. «Տխուր մի սարսուռ է պատում մարդուս, երբ մտածում է, որ այլևս Վան երիտասարդ չի մնաց: Մի քանի ամիս առաջ, Վանի ամեն կողմերում վխտացող հասուն երիտասարդների հետքեր՝ հազիվ թե կը նշմարվին, որոնց սակավագյուտ ներկայությունն անգամ կարծես կառավարության աչքին շատ բան երևալով՝ ուղղակի և անուղղակի կերպե-

---

[44] *Հ. Պ ո ղ ո ս յ ա ն. նշվ. աշխ.. էջ 273:*

[45] *Նույն տեղում, էջ 270:*

[46] *Վ ա ն ց ի. Վանի անցքերը, Վան կոտորածից հետո.– «Արաքս» (Ս. Պետերբուրգ), 1898, գ. Ա, էջ 128:*

[47] *Հ. Պ ո ղ ո ս յ ա ն. նշվ. աշխ., էջ 276-277:*

րով նոցա ևս հալածում և ոչ մի միջոց չէ խնայում, որպես զի նոքա էլ թողնեն ու հեռանան հայրենիքից»[48]:

Վանից աշխարհազորայինների հեռանալուց հետո թուրքերն ու քուրդ հրոսակները սրի քաշեցին անմեղ ու անպաշտպան մարդկանց, ավերեցին ու այրեցին նրանց տները: Ջարդն ու թալանը մոլեգնում էին Վանի ողջ գավառում: Այս ամենին հաջորդում են սովն ու հիվանդությունները: Պետերբուրգում հրատարակվող «Արաքս» ամսագիրը 1898 թ. գրում է, որ մինչ դեկտեմբեր ամիսը տիֆից և այլ հիվանդություններից «միմիայն Վանի մեջ մոտ 6000 անձ են մեռել, մեծ և փոքր...»[49]: Ի լրումն այս ամենի, քաղաքն ու գյուղերը լցված էին մի քանի հազար անօթևան ու սովալլուկ որբերով:

«Արարատի» տպագրած Վասպուրականի կոտորածի տեղեկագրից իմանում ենք, որ սպանվել է 1365 վանեցի, այդ թվում 6 քահանա և այլևայլ գործերով քաղաք եկած գյուղացիներ, իսկ գավառներում սպանվել է 5336 մարդ, կին ու երեխա, այդ թվում՝ 33 հոգևորական [50]: Ինչպես միշտ, հայ հոգևորականությունը, վանքերն ու եկեղեցիները թուրքերի ու քրդերի հարձակումների գլխավոր թիրախներից են եղել:

1896 թ. ջարդերի ողբերգական արարվածով XIX դարը փակեց իր վարագույրը: XX դարի սկզբին՝ 1909 թ., ըստ Ա-Դոյի, Վանն ուներ 7500 տուն, որից 6000 տունը Այգեստանում (որից 3000 տունը՝ հայեր) և 1500 տունը Քաղաքամիջում (1000 տունը՝ հայեր): Նա մեկ տունը համարելով 5 շնչից կազմված, հայերի թիվը հաշվում է 20000[51]: Անշուշտ, սրանք ընդամենը կողմնորոշիչ, մոտավոր թվեր են:

Վանը պարսպապատ էր, պարիսպներն ունեին չորս դուռ, որոնցից մեկը կոչվում էր Թավրիզի դուռ, մյուսը՝ Նոր կամ Սարայի դուռ, երրորդը՝ Միջին դուռ, իսկ չորրորդը՝ Նավահանգստի կամ Իսքելեյի դուռ[52]: Վերջինս քաղաքը կապում էր Ավանցի հետ, որը շուրջ 300 տուն ունեցող նավահանգիստ էր, որի բնակիչները հիմնականում նավավարներ ու նավազներ էին: Այնտեղ կար մոտ հարյուր ճերմակաթույր առագաստանավ, որոնցից ամեն մեկը կարող էր տեղափոխել 40-50 մարդ: Կային շատ ավելի մեծ տարողության նավեր[53]:

Քաղաքամիջում էին նահանգային և պետական հիմնարկությունները, քաղաքապետարանը, Ազգային առաջնորդարանը, Հիսուսյան-Շուշանյան դպրոցը, «Հայրիկյան» և «Ավետիսյան» գրադարան-ընթերցարանները, Ամերիկյան միսիոներության եկեղեցին, դպրոցն ու մանկապարտեզը և, վերջապես, Վանի նշանավոր շուկան: Քաղաքամիջում կար յոթ եկեղեցի, որոնցից Ս. Նշանը, Ս. Պողոսը, Ս. Տիրամայրը, Ս. Վարդանը, Ս. Ծիրանավորը, Ս. Սահակը գործող էին, իսկ Ս. Ա-

---

[48] *Վ ա ն ց ի. Վանի անցքերը, Վան կոտորածից հետո, էջ 116:*

[49] *Նույն տեղում, էջ 123:*

[50] *Տեղեկագիր Վասպուրականի կոտորածին.– «Արարատ» (Վաղարշապատ), 1896, դեկտեմբեր, էջ 586:*

[51] *Ա - Դ ո. Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթները, Երևան, 1912, էջ 17:*

[52] *Նույն տեղում, էջ 15-16:*

[53] *Հ. Պ ո ղ ո ս յ ա ն. նշվ. աշխ., էջ 38-39:*

ռաքյալը՝ կիսավեր էր: Այգեստանում կար հինգ եկեղեցի. Արարքը և Նորաշենը կանգուն էին, իսկ Հանկույսները, Ս. Հակոբն ու Հայավանքը՝ կիսավեր[54]:

Շուկայական հրապարակը քաղաքի ամենաաշխույժ մասն էր: Այստեղ էին կենտրոնացած նաև արհեստանոցները: Վանի 60 արհեստանոցներում աշխատում էին ավելի քան 200 ոսկերիչ և արծաթագործ[55]: Բարձր զարգացման էին հասել նաև մյուս արհեստները՝ պղնձագործությունը, փայտագործությունը, սաղափագործությունը, ջուլհակությունը, որոնք հասել էին արվեստի մակարդակի[56]: Վանը Արևմտյան Հայաստանի վաճառաշահ քաղաքներից էր: Տեղի առևտրական ընկերությունները ներկայացուցիչներ ունեին Արևելքի երկրներում, Ռուսաստանի մի շարք քաղաքներում, Մանչեստրում ու Համբուրգում, նրանք վաճառահանում էին վանեցի վարպետների բազմաքանակ ու բազմահմուտ արտադրանքը և նույնիսկ, ինչպես «Մուրճ» ամսագիրն է նշում՝ «Վանա փամպլիկ սպիտակ կատուներ, որոնք հռչակված են»[57]:

1904 թ. «Մուրճ» ամսագրում տպագրված մի հոդվածից իմանում ենք, որ միայն Կ. Պոլսում աշխատող վանեցի պանդուխտները տարեկան 80 000 լիրա փող և շուրջ 4-5 հարյուր լիրայի էլ ընտիր ապրանքներ էին առաքում Վան, իսկ «Մասիսի» ու «Մշակի» թղթակիցների հաշվումներով վանեցի պանդուխտները տարեկան վաստակում էին շուրջ մեկ միլիոն լիրա: Կովկասում, Ամերիկայում, Բուլղարիայում աշխատող վանեցիներն էլ տարեկան շուրջ 500 000 լիրա էին տուն ուղարկում[58]: Նաև այս ահռելի հարստության շնորհիվ էր, որ Վանը ոչ միայն կարճ միջոցում վերականգնվեց, այլև կրկին աշխուժացավ կրթական-մշակութային կյանքը: Արդեն 1903-ին Վանում կար 25 դպրոց. 10-ը՝ հայկական, 6-ը՝ ամերիկյան և 9-ը՝ ֆրանսիական, որոնք բոլորն էլ ունեին իրենց գրադարանները: Բացի այդ, գործում էին մի քանի հասարակական գրադարան-ընթերցարաններ, որոնցից ամենամեծը «Ազատության լույսն» էր՝ ընդարձակ և շքեղ թատերասրահով: Գրադարաններ էին բացվել նաև գավառներում[59]:

Վանի հինգ տպարաններում տարբեր տարիների լույս են տեսել 24 հայերեն թերթեր: Առաջինն «Արծվի Վասպուրականն» էր, որ 1858–1874 թվականներին հրատարակվում էր Վարագա վանքում: Ի դեպ, Աղթամարում էլ են հրատարակվել թերթեր՝ «Կոտոշ» և «Կռիվ» (1908): 1905-ից սկսած Վանում իրար են հաջորդում «Արյան ձայն», «Հայացք», «Նոր սերունդ», «Ազատ խոսք», «Կայծ», «Վտակ», «Ասուպ», «Երկունք», «Զարթիր», «Ծովակ», «Կոչնակ», «Կռհակ», «Հորձանք», «Մայրենի մամուլ», «Ե.Ք. Ը.», «Օազիս», «Աշխատանք», «Կարկուտ», «Լույս», «Վարագ» թերթերը: Ամենաերկարակյացը «Վան-Տոսպն» էր, որը 1911-ին Վանում հիմնվե-

---

[54] *Վ ա ն ի կ. Վան քաղաք, տեղագրական ու տնտեսական վիճակագրություն.– «Բյուրակն» (Կ. Պոլիս), 1899, թիվ 38-39, էջ 608:*

[55] С. А к о п я н. Западная Армения в планах империалистических держав в период первой мировой войны. Ереван, 1967, с. 14.

[56] *Ս. Գ ո ր ո ղ ե ց կ ի. Հայաստանի և հայ կուլտուրայի մասին, Երևան, 1980, էջ 77-78:*

[57] *«Մուրճ», 1903, թիվ 9, էջ 26:*

[58] *«Մուրճ», 1904, թիվ 9, էջ 26:*

[59] *Հ. Պ ո ղ ո ս յ ա ն. նշվ աշխ., էջ 320-321:*

լով,հետագայում տեղափոխվել է Թիֆլիս, իսկայնուհետև, մինչև 1919-ը լույս է տեսնում Երևանում[60]:

1915 թ. քաղաքի գլխին պայթեց նոր արհավիրք, որը պիտի ջնջեր աշխարհի հնագույն քաղաքակրթության օրրաններից մեկը՝ երեքհազարամյա Վանը:

Թուրքերը Վան-Վասպուրականի կոտորածները վաղուց էին նախապատրաստել: Դեռևս 1911 թ. Վանի թուրքական կայազորը քառապատկվեց՝ 8 գումարտակից հասնելով 32-ի[61]:

1915-ի գարնանը ջարդերն ու կոտորածները մոլեգնեցին ողջ Վասպուրականում: Փրկվողներն ապաստանեցին Վանում: Այլևս նահանջելու տեղ չկար, և վանեցիները որոշեցին պատնեշվել բազմահազարանոց բանակի առաջ: Վանը պաշարվում է թուրքական ու քրդական տասներկուհազարանոց բանակով: Միմյանցից կտրվում են Քաղաքամեջն ու Այգեստանը: Քաղաքամիջում էին գտնվում պետական զորանոցներն ու զինապահեստները: Ապրիլի 5-ին կազմվում է «Քաղաքամիջի զինվորական մարմինը», որը նախապատրաստվում է մարտերին: Քաղաքամիջի հերոսներն ունեին ընդամենը 101 հրացան և 90 մաուզեր, կային նաև 120 որսի հրացաններ ու փոքր ատրճանակներ[62]: Ինչպես Քաղաքամիջում, Այգեստանում էլ ապրիլի 5-ին, տարբեր կուսակցությունների համախմբումով ստեղծվեց «Վանի հայ ինքնապաշտպանության զինվորական մարմին»: Հետագայում, թուրքերից խլված զենքի ու գավառներից եկածների շնորհիվ զինյալների թիվը հասավ 1054-ի (505 հրացան և 549 մաուզեր) և մի 40 հոգի էլ թիկնապահներ ու շտաբականներ[63]:

Ապրիլի 7-ին թուրքերն ու քրդերն անցնում են ընդհանուր հարձակման: Թշնամուն դիմագրավելու նպատակով խիստ կարգապահություն էր մտցված: Ստեղծվել էր «Ոստիկանական վարչություն» իր 50-ի չափ օրինապահ ուժերով, դատարանով ու բանտով, «Հայթայթիչ» և «Նպաստից» հանձնաժողովներ, որոնք օգնում էին սովյալներին ու գաղթականներին, «Հայկական կարմիր խաչն» ուներ իր հիվանդանոցը, «Ամրաշեն խմբի» մոտ 500 բանվորները վերականգնում էին քանդված դիրքերը: Վանի զինագործների գլուխգործոցը Բուլղարացի Գրիգորի պատ-

---

[60] *Վանում լույս տեսնող թերթերի մասին (այդ թվում՝ խմորատիպ) տե՛ս Ե. Տ ե ր - Մ կ ր տ ի չ յ ա ն. նշվ. աշխ., էջ 618-625, նաև Հայ պարբերական մամուլը, մատենագիտական համահավաք ցուցակ 1794-1980, կազմեց՝ Մ. Բաբլոյան, Երևան, 1986:*

[61] *Ռ. Ս ա հ ա կ յ ա ն. 1915 թ. Վանի հերոսամարտը օտար աղբյուրներում.– ՀԽՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 1989, № 8, էջ 54:*

[62] *Հ. Կ ո ս ո յ ա ն. Վան-Քաղաքամեջի հերոսամարտը.– Վան-Վասպուրականի հերոսամարտը, կազմեց՝ Հ. Փափազյանը, Երևան, 1990, էջ 47: Վան-Վասպուրականի հերոսամարտի մասին տե՛ս նաև՝ Ա. Հ ա մ բ ա ր յ ա ն. Վանի 1915 թ. հերոսամարտը.– ՊԲՀ, 1985, № 2, էջ 33-45, Ա լ. Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն յ ա ն. Կովկասյան ռազմաճակատի գործողությունները և Վանի ինքնապաշտպանությունը 1915 թ.– «Բանբեր Հայաստանի արխիվների» (այսուհետև՝ ԲՀԱ), 1977, № 3, էջ 103-138:*

[63] *Օ. Մ խ ի թ ա ր յ ա ն. Վանի հերոսամարտը, Սոֆիա, 1930, էջ 197, Ա. Փ ո խ ա ր յ ա ն. Վան-Այգեստան, կռիվների նախօրյակ.– Վասպուրական, Վենետիկ, 1930, էջ 30, Ա. Փ ո խ ա ր յ ա ն. Վասպուրականի հերոսամարտը, 1915 թ. ապրիլի 7 (20).– Վան-Վասպուրականի հերոսամարտը, էջ 29:*

բաստած թնդանոթն էր: Մարտերի ընթացքը լուսաբանում էր «Աշխատանք» թերթը[64]:

Պահպանվել են ականատեսների հիացական նկարագրությունները, թե ինչպես 10–15 տարեկան տղաները, շուրջ 50 հոգի, նետվում էին փողոցներում ընկնող թշնամու արկերի վրա, վայրկենապես դուրս քաշում պատրույգները, վնասազերծում և նրանց մեջ եղած վառոդը հանձնում զինագործներին[65]:

Վերջապես, շուրջ մեկամսյա դյուցազնամարտն ավարտվեց հայերի հաղթանակով: Մայիսի 3-ին արյունարբու Ջնդեթն իր հրոսակների մնացորդներն առած՝ փախավ Վանից:

Հաղթանակից երկու օր անց՝ մայիսի 5-ի երեկոյան, Վան մտավ հայկական կամավորական հեծելազորը: Միայն հաջորդ օրը տեղ հասան ռուսական զորքերը, որոնց մեջ էլ մեծաթիվ էին հայերը: Արդեն մայիսի 7-ին Վանի հերոսամարտի ղեկավարներից Արամ Մանուկյանը նշանակվեց Վասպուրականի ժամանակավոր նահանգապետ: Ընդամենը մեկ-երկու օրում կազմակերպվեց կառավարություն, որի հիմքը դրվել էր հերոսամարտի օրերին: Ստեղծվեցին նահանգային վարչություն, նաև տնտեսական, կրթական, երկրագործական, առողջապահական, առևտրական, ոստիկանական ու դատական մարմիններ: Վանի քաղաքապետարանն ուներ 60 հետևակ և 12 հեծյալ ոստիկան[66]:

Շատ կարճ ժամանակամիջոցում նահանգային վարչության ու քաղաքապետարանի ջանքերով կրկին աշխուժանում է քաղաքի կյանքը, սկսում են աշխատել արհեստանոցները, խանութները, շուկան, փռերը և այլն: Վան-Վասպուրականի հայությունը ոտքի կանգնեց, բայց, ցավոք, հայերի ինքնավարությունը ընդամենը 70 օր տևեց: Ռուսական կայսրության շահերին անհարիր էր Արևմտյան Հայաստանի ազատագրումն ու անկախության վերականգնումը, և ռուսական բանակն անակնկալ ետ տանելով՝ թուրքերին հնարավորություն տրվեց ուժերը հավաքել ու հակահարձակման անցնելով բնաջնջել դեռևս մնացած հայությանը: «Հայաստանն առանց հայերի» կարգախոսը գործում էր անգութ համառությամբ: Արամի կառավարությունը և հայկական կամավորական գնդերի հրամանատարությունը դիմեց ռազմաճակատի ղեկավարությանը, որպեսզի թույլ տրվի մնալ Վանում և պաշտպանել ժողովրդին, բայց մերժում ստացավ:

Ետ քաշվող ռուսական բանակի հետ գաղթեց նաև Վասպուրականի հայությունը, դատարկվեց մեր ժողովրդի բնօրրանը: Թուրքերը մտան անպաշտպան քաղաքը: Շուտով ռուսական բանակը վերադարձավ, բայց Վանն արդեն ուրվականների քաղաք էր:

Իրենց ավերված հայրենիքն են վերադառնում գաղթականներից շատերը. Վանն ու գյուղերը սկսում են կենդանանալ: Դանդաղորեն վերականգնվում են ա-

---

[64] *Օ. Մ խ ի թ ա ր յ ա ն. Վանի ինքնապաշտպանությունը.– Արամը, Բեյրութ, 1969, էջ 458-462, տե՛ս նաև «Հայրենիք» (Բոստոն), 1924, թիվ 11:*

[65] *Հ. Մ ո ւ ր ա դ յ ա ն. Վանի հայության 1915 թ. ապրիլ-մայիսյան հերոսամարտերը.– ԲՀԱ, 1968, №1, էջ 160:*

[66] *Օ. Մ խ ի թ ա ր յ ա ն. Վանի հերոսամարտը, էջ 217, ն ո ւ յ ն ի՝ Վանի հայկական ժամանակավոր կառավարությունը.– Վան-Վասպուրականի հերոսամարտը, էջ 100:*

վերակները, կյանքով լցվում, Վասպուրականի սարերից ու ձորերից հավաքվում են հայ որբուկները, որոնց համար Վանում որբանոց է ստեղծվում, բացվում են բուժարաններ, թեյարաններ ու խանութներ, պետական հիմնարկներ, աշխատանքի են անցնում արհեստավորները: Բայց 1917 թ. հոկտեմբերյան հեղաշրջումն ամեն ինչ իրար խառնեց: Ռուսական բանակները ետ կանչվեցին: Մինչ ռուսական բանակում ծառայող տասնյակ հազարավոր հայ զինվորները գերմանական ռազմաճակատներից կվերադառնային հայրենիք, հայկական կամավորական գնդերը պիտի պաշտպանեին հազարավոր կիլոմետրեր ձգվող նոր սահմանագիծը:

Ռուսական զորքերի հեռանալուց հետո ստեղծվեց տեղական կառավարություն՝ «Վասպուրականի իշխանություն», որի նախագահ ու արտաքին հարաբերությունների վարիչ ընտրվեց Կոստի Համբարձումյանը: Կառավարության մեջ մտան 1915 թ. հերոսամարտերի հերոսներից ու ղեկավարներից մի քանիսը: Ստեղծվեցին ներքին, ելևմտական, առողջապահական, խնամատարության և գյուղատնտեսական բաժիններ, որոնք եռանդուն գործունեություն ծավալեցին նահանգի հայ բնակչության կյանքը կարգավորելու ուղղությամբ: 20–35 տարեկանների զորահավաքի միջոցով կազմվեց երկու գունդ՝ ամեն մեկը հազարական զինվորով, որոնցից երկու հարյուրը՝ հեծյալ: Նորաստեղծ «Սպայից դպրոցում» շուրջ 30 զինվորներ չորս ամիս ռազմագիտություն ուսանելով՝ բանակն ապահովեցին հրամանատարներով: Ստեղծվեց ոստիկանություն:

Տնտեսական կյանքը կարգավորելու համար ցուցակագրվեցին նահանգի ողջ ունեցվածքը, ուտեստեղենի պաշարները: Պարսկաստանից բերվեցին հացահատիկ, այլ մթերքներ, կենդանիներ: Ընդունված մի շարք օրենքներով ու հրամաններով կարգավորվեց նահանգի ներքին կյանքը, Վասպուրականի իշխանությունը սկսեց թողարկել սեփական դրամ՝ մեկից մինչև հիսուն ռուբլի արժողությամբ. դրանք կոչվում էին «Փոխգիր ներքին գործածության համար»[67]:

Բայց ռազմաճակատից օրեցօր տխուր լուրեր էին հասնում: 1918 թ. փետրվարին Կարինի անկումը հարուցեց Վանի ժողովրդի զարմանքն ու զայրույթը: Վասպուրականի վիճակն առավել անտանելի դարձավ, երբ նույն թվականի մարտի 3-ին Բրեստ-Լիտովսկում ստորագրված պայմանագրով Ռուսաստանը Թուրքիային ընծայեց Կարսն ու Արդահանը: Ռազմաճակատի գիծը հեռանում էր, թուրքերի օղակը սեղմվում: Եվ Վասպուրականի իշխանությունը, 1918 թ. մարտին որոշեց բնակչությանը գաղթեցնել[68]: Շուրջ 30 հազար ժողովուրդն անվերջ, անդադար մարտերով, դեռ

---

[67] *Վասպուրականի իշխանության մասին տե՛ս Ա. Մ ա ք ս ա պ ե տ յ ա ն. Վասպուրականի իշխանությունը.– Վասպուրական, էջ 105-112:*

[68] *Նույն տեղում, էջ 109, տե՛ս նաև Գ. Վ ա ր դ ա ն յ ա ն. Ազգային տոմար, Վասպուրականեն մինչև Իրաք, Լոս Անճելըս, 1992, էջ 79-101, Հ. Մ ա ն ո ւ կ յ ա ն. Դեպքերը Վասպուրականում (1914-1918).– «Վեմ» (Փարիզ), 1937, թիվ 3, էջ 95:*

ձյունապատ լեռներով ու ձորերով, քայլ առ քայլ դուրս էր գալիս շրջապատումից: Բայց դեպի հյուսիս ճանապարհը փակ էր: Որոշվում է անցնել Ուրմիա, ուր նրանց են միանում Սալմաստի հայերն ու ասորիները: Ըստ Իրաքի ներքին գործոց վարչության աշխատակից անգլիացի Ռ. Ստեֆորդի, որը սերտ կապի մեջ էր գաղթողների հետ, այս դժոխային ճանապարհին զոհվել են ավելի քան 17 հազար հայեր ու ասորիներ, իսկ ավելի քան 10 հազարը՝ գերվել են, տղամարդկանց սպանել են, իսկ կանանց ու երեխաներին վաճառել տարբեր գյուղերում[69]: Թեև 1918 թ. մայիսի 28-ին Հայաստանն անկախ է հռչակվում, բայց, ցավոք, արդեն կորսված էր Արևմտյան չքնաղ հայաշխարհն ու Վանա դրախտը:

ВАН СО СРЕДНЕВЕКОВЬЯ ДО НАЧАЛА XX ВЕКА

СЕРГЕЙ ВАРДАНЯН

Р е з ю м е

Гагик Арцруни в 908 г. провозгласил Васпуракан независимым царством. Столицей Васпураканского царства (908–1021) стал город Ван. В последующие века Ван вследствие нападений иноземных захватчиков переходил из рук в руки. Но самые большие разрушения городу, особенно зданиям и церквам, были нанесены землетрясением 1648 г. Усилиями трудолюбивых жителей город был восстановлен из руин, и Ван вновь превратился в один из выдающихся центров Западной Армении в области образования, искусства, ремесел и торговли. В период геноцида армян, в апреле 1915 г. Ван подвергся варварскому нападению турецких и курдских вооруженных сил, но город выстоял, и известное ванское сражение завершилось победой армян. Тем не менее, впоследствии (в 1918 г.) ванские армяне были вынуждены оставить свою колыбель, и после больших жертв и лишений, найти прибежище в других странах.

VAN FROM MIDDLE AGES TO EARLY 20th CENTURY

SERGEY VARDANYAN

S u m m a r y

In 908 Gagik Artsruni declared the independence of Vaspourakan Kingdom (908–1021) and Van became its capital city. In later periods Van has passed from hand to hand several times, but the greatest damage to the buildings and churches of the town was caused by the earthquake of 1648. The hard-working townsfolk of Van repaired the city and once again it became one of the flourishing centers of trade, crafts, education and culture in Western Armenia. In April 1915, in the days of the Armenian Genocide the city was attacked by regular and irregular Turkic and Kurdish forces, but in famous battle for Van its Armenian citizens were victorious. Nevertheless, in 1918 the Armenians of Van were forced to abandon their homeland and with great losses spread over different countries.

[69] Л. С а р г и з о в. Ассирийцы стран Ближнего и Среднего Востока. Ереван, 1979, с. 118-119.